ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովը հայտարարում է հետևյալ հողամասերի դասական աճուրդով վաճառքի մասին

Լոտ N 1- գյուղատնտեսական գործունեության համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0216-0118, մակերեսը՝ 0,17106 հա, մեկնարկային գինը՝ 50 000 դրամ:
Լոտ N 2- գյուղատնտեսական գործունեության համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016- 0208-0034, մակերեսը՝ 2,12862 հա, մեկնարկային գինը՝ 734 500 դրամ:
Լոտ N 3- հասարակական կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց N 15/1, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0031-0244, մակերեսը՝ 0,0024 հա, մեկնարկային գինը՝ 100 000 դրամ:
Լոտ N 4- գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 41, կադաստրային ծածկագիրը՝
10-002-0458-0038, մակերեսը՝ 0,32353 հա, մեկնարկային գինը՝ 6 110 000 դրամ:

Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ, այլ սահմանափակումներ: Աճուրդի մասնակցության վճարը լոտ N 1-ի և լոտ N 2-ի դեպքում՝ 10000 դրամ է, լոտ N 3-ի և լոտ N 4-ի դեպքում՝ 20 000 դրամ, որը անկախ աճուրդի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ը, որը աճուրդի մասնակիցները մուծում են աճուրդի անցկացման օրը: Աճուրդի դրված հողամասերի աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Ցանկացողները ներկայացնում են հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Աճուրդի կանոնակարգին, պայմանագրերի նախագծերին և ճարտարապետահատակագծային առաջադրանքներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմաններին ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով: Հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն գին: Աճուրդում հաղթող ճանաչված անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել առաջարկած ողջ գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր: Աճուրդը կկայանա 2023 թվականի **հոկտեմբերի 31**-ին ժամը 11.00-ին, համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից 3 աշխատանքային օր առաջ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ